

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան դիմել 10 րոպե, կես տարվանը 6 րոպե:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից համադրատուն մէջ:
Առարարագործարարի պիտոմ են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Հայտարարութիւնները համար. վճարում են
խորանային բաժին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գաղափարներ թաղա-
ւորացիներէն վրա Մայրենի լեզու. Նամակ
Հուշեր: Նամակ Մոսկովայից: Նամակ Ախալ-
ցխայից: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Գաղափարներ տեսութիւն: Արտաքին
լուրեր: ՀԵՌԱՎԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՍՏԱՆԸ ԹԱԳԱՆՈՐԱՊԱՍՏՆԵՐԻ ՎՐԱ

Մարտի 26-ին սկսեցաւ Ս. Պետերբուր-
գում դատաստանը թագաւորապաններ
վրա:

Նախագահում է սենատոր Ֆուլկս, մաս-
նակցում են սենատորներ. Բիպպէն, Պիսա-
րեմ, Օրլով, Սինիցին, Բէլոստոյկին: Գասա-
կարգերի ներկայացուցիչներ. Ս. Պետերբուր-
գի նահանգական աշխատանքներէն առ-
նաջնորդ կոմս Բոբրինսկի, գաւառական ազ-
նախնու թեման առաջնորդ բարոն Կորնի-
Մոսկովայի քաղաքապետ Տրեմաիսկի, գա-
ւառական ստորաշինա Ս. Պետերբուրգի նա-
հանգի Գելկէր և սենատի զլխաւոր քար-
տուղար Պոպով: Մեղադրում է սենատի առ-
նանձին բաժնի պրօկուրօրի պաշտօնակա-
տար Մուրաւիլեւ:

Մեղադրվածներին պաշտպանում են. Բի-
սակովին պաշտպանում է Ունկովսկի, Մի-
խայիլին պաշտպանում է Խարտուլարի,
Գիսէ Գելֆման Տրեմաիսկի կողմ պաշտպա-
նում է Գելկէր, Կիբալչիչին պաշտպանում է
Գելարդ, Սոֆիա Պետրօսկային պաշտպա-
նում է Կելկէր, իսկ ժեղաբով ինքն իրան
է պաշտպանում:

Բիսակով 19 տարեկան, Միխայիլ 21
տարեկան, Գելֆման 26 տարեկան, Կիբալ-
չիչ 27 տարեկան, Պետրօսկայ 27 տարե-
կան, ժեղաբով 30 տարեկան:

Բոլոր մեղադրվածները սե շորերով են
հաղնված: Բիսակով աննշան, անապրեր
արտայայտութեամբ կալիկի դէմք ունի,
անորոշ է խօսում: Միխայիլ բարձր հասակի
պինդ կազմուածքով մարդ է: Գելֆման մի
անհամակրական, հրէայ արպով և մաշված
դէմքով մի կին է: Կիբալչիչ շէկ մազերով
և հալիւ բուսնող միութեով, աննշան դէմ-
քով: Պետրօսկայ նիհար կազմուածքով, լայն
ձակառով մի կին, իր տարիքից աւելի երե-
տասարդ է երեւում: Ժեղաբով բարձր
հասակով, մեծ շէկ միութեով, մոխրադոյն
աչքերով և լի արտայայտութեան երեսով
աղամարդ:

Ժեղաբով յայտնում է որ մարտի 25-ին
խնդիրք էր առել Սենատին, որի մէջ յայ-
տնել է որ իր կարծիքով քաղաքական յան-
ցաւորի գործի քննութիւնը չէ կարող են-
թարկվել սենատի առանձին բաժնի դատա-
րանի իրաւասութեանը, որովհետեւ կառա-
վարութիւնը ինքն գործի մէջ հետաքրքր-
ված կողմն է կազմում, ուրեմն այդ տե-
սակ գործ կարող է քննել միմիայն ժողովը-
րի ներկայացուցիչներէն, ժողովրդի խղճի-
տանքը ներկայացնող երդուեալներէն բաղ-
կացած դատարանը:

Պրօկուրօրը յայտնում է որ ժեղաբովի

խնդիրքը, հիմնվելով 2 հատորի 1031 յօդ-
քէական դատով. կանօն. և 2-րդ մասի
XV հ. օրէնսդրութեան, 1879 թ. շարունա-
կութեամբ և 600 յօդ. նոյն կանօն. վրա
թողնվում է առանց հետեանքի:

Ժեղաբով յայտնում է իրան բաւականա-
բաժն:

Նախագահը հարցնում է ժեղաբովին
որքան տարեկան է:—Պատասխան. 30 տա-
րեկան:—Հարց. Ուղղափառ կրօնի:—Պատ.
Մկրտած եմ ուղղափառ կրօնի մէջ, բայց
ուղղափառութիւնը մերժում եմ, թէ և Բի-
սուս Գրիստօսի վարդապետութեան հու-
թիւնը ընդունում եմ: Այդ վարդապետու-
թիւնը իմ բարոյական ձգտումների մէջ
բունում է պատաւօր տեղ: Ես հաւատում
եմ այդ վարդապետութեան ճշմարտու-
թեան ու արդարութեանը և հանդիսաւոր
կերպով ձանաչում եմ որ հաւատը առանց
գործի մեռած է և որ ամեն մի ճշմարտ-
քրիստոնէայ պէտք է մարտնչի ճշմարտու-
թեան, ձեռնադնելի և թղթերի համար և
եթէ հարկաւոր է՝ տանջիլի դրանց համար,
ահա իմ հաւատս:—Հարց. Որտեղ էիք
կենում վերջին ժամանակ և ինչով էիք պա-
րագում:—Պ. Կենում էի Իվանյովսկի գրն-
դի քաղաքամասում և առհասարակ ապ-
րում էի այնտեղ, որտեղ պահանջում էր
գործը և որտեղ ինձ մասնաշրջաց էր ա-
նում կատարող մասնաժողովը: Մտաւայում էի
ազգի ազատութեան գործին: Գա իմ միակ
պարագմունքն էր, որին ես ինձ ամբողջապէս
նուիրել եմ շատ տարիներ:

Գաղափարական պրիստով յայտնում է որ
վկաններից չորսը չէր ներկայացան. գնդապետ
Գլօբօֆսկի, լուսնիստ Կուլեբիսկին, ոստի-
կան Գէնիսով և փաճառակաւոր որդի Գոլ-
դէնբերգ:

Պրօկուրօրը յայտնում է որ երեք առա-
ջին վկանները չէր ներկայացան հիւանդու-
թեան պատճառով և գործի մէջ կայ նրանց
հիւանդութեան մասին օրինաւոր վկայա-
կանը, իսկ վերջինը, Գոլդէնբերգ, չէր ներկա-
յացաւ, արդէն մեռած լինելով:

Պաշտպանները համաձայնվում են որ
այդ վկանների բացակայութիւնը չէ կարող
արգելք լինել գործի քննութեան շարու-
նակութեան համար:

Պրօկուրօրի և պաշտպանների մէջ տա-
րաձայնութիւն է յայտնվում մեռած Գոլ-
դէնբերգի գրաւոր ցուցումների կարգաւո-
րման: Գոլդէնբերգ թէ և մեղադրվում էր
ուրիշ գործում, բայց մասնակից էր ժեղաբ-
ովին, Պետրօսկային և Կիբալչիչի գործում,
որոնք մեղադրվում էին և Լօգովօ-Սիվաս-
տօպօլի երկաթուղու ճայթման գործում:

Ժեղաբով ասում է որ եթէ Գոլդէնբեր-
գի ցուցումները դատարանը յարմար է հա-
մարում կարգաւ, նրա կարծիքով իրաւունք
կայ և Կօշուրնիկովին ու Կօշուրնիկովին
կանչել որպէս վկաններ գործի վերաբերու-
թեամբ և խնդրում է հաստատել որ Գոլ-
դէնբերգ ճշմարիտ մեռել է:

Գաղափարներ առանձնանում է խորհրդակ-
ցելու համար:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ

Կ. Պօլսի «Մասիս» լրագրում քանի մի
ժամանակից սկսվել է և շարունակվում է
մի տաք բանակիւթ թէ ինչ լեզու պէտք է
գործ դնեն հայերը իրանց մէջ՝ գրաբաւը
թէ աշխարհաբաւը:

«Լոյս» լրագրը այսպէս է վճռում այդ
վէճը:

«Մենք հոս առանց երկարօրէն վիճաբա-
նութեան մտնելու, պիտի աշխատենք հա-
մառօրեա բացատրել մեր կարծիքն, որ
խիստ պարզ է:

«Լեզու ըսելով կը հասկնանք այն մի-
ջոցն, որով մարդ իր կարծիքը, խորհուրդն
և գաղափարները կը բացատրէ և իր միտ-
քը կը յայտնէ: Արդ, երբ այս է լեզու
կոչուածին պաշտօնը, պէտք է որ խիստ
պարզ լինի, այսինքն, այն լեզուաւ խօսուի
և գրուի, որ արդէն ժողովրդեան լեզու է,
ըսել կուզեմք որ ժողովրդեան ընդհանրապէս
կը հասկնայ:

«Մեր մէջ ալ այսօր որովհետեւ ժողովր-
դեան լեզուն աշխարհաբաւն է, այսինքն
ժողովրդն այդ լեզուն կը հասկնայ, ու
րովհետեւ այդ է նրա խօսակցութեան լե-
զուն, ուրիմն և աշխարհաբաւ լեզուն պէտք
է որ ընտրենք և գայն կոչուել, մաքրելու և
կանօնաւորելու հոգ տանինք:

«Գրելու նպատակն է կարծիք և գաղա-
փար ծաւալել, գաղափարաց հաղորդակցու-
թիւն հաստատել և հետեաբար կարծեաց
և գաղափարաց միութիւն յառաջ բերել:
Ուստի և այս տեսութեամբ ալ պէտք է
գարձեալ աշխարհաբաւն ընտրել, վասն զի
ժողովրդին ընդհանրապէս այդ լեզուն կը
հասկնայ և անոր վարժված է: Եթէ գրեւած
մը ժողովրդեան համար չէ, այն ստեղծ փոյթ
չէ թէ ինչ լեզուով գրուի, կուզէ դրաբաւ
լինի և կամ Նարեկի լեզուն, մի և նոյն է:
Գալով սա կէտին թէ զպրօցներու մէջ գրա-
բաւ թէ աշխարհաբաւ լեզուն առանդե-
լու է, ահա մեր կարծիքը. նախալրելարա-
նոց մէջ, ուր ուսանողը ընդհանրապէս
արուեստաւոր պիտի լինին, անշուշտ աշ-
խարհաբաւ լեզուն աւանդուել է, իսկ ու-
սումնարանաց մէջ այն աշակերտք, որ եկե-
ղեցեայն, դրազէս և վարժապետ լինելու
հանդերձեալ են, պէտք է նաեւ ուսնեն
գրաբաւ լեզուն, որ իրենց ասպարիզին
համար հարկաւոր է: Մեր կարծիքն այս-
պէս հաստատուել բացատրել է յետոյ կանց-
նիմք սա կէտին, թէ խիստ լաւ կը լինի
փոխանակ լեզուի վրա խնդիր յարուցանե-
լու և ասով զբաղելու, լուսազոյն է գաղա-
փար ծաւալելու աշխատել, որ աւելի պէտք
է, քան թէ գրաբաւի խնդիրն, որ աւելորդ
աշխատութիւն մի է, որովհետեւ աշխարհա-
բաւն արդէն գործածական դարձած և
ընդհանրացած է:

«Եւ որովհետեւ կարծիք և գաղափար
տարածելու միջոցը գլխաւորաբար լրագիրը
և լսարաններն են, հետեաբար պէտք է
արդեւ ոյժ տալ և զանոնց ընդհանրացնե-
լու աշխատել հարկ եղած զօհոգութիւնն
ընելով:»

Ափսոս որ «Լոյս» լրագիրը, որ այսպէս

գեղեցիկ կերպով պարզել է աշխարհաբաւ
լեզուի կարեւորութիւնը, մոռացել է գաղա-
փար տարածելու միջոցների թուում յիշել
բացի լրագիրներից և լսարաններից և մի
զօրեղ բարոյական գործիչ, այն է եկեղեցին:
Եթէ լեզուն միջոց է, որով միտք պէտք
է արտայայտվի, իսկ միտք արտայայտու-
համար պէտք է խօսել հասկանալի լեզուով,
ուրեմն ի՞նչի բարոյական մտքերը, Գրիստօ-
սի վարդապետութիւնը աւետարանը եկե-
ղեցական տարողութիւնները աշխատում
ենք ժողովրդին այնպիսի լեզուով, զրա-
բանով աւանդել, որ նա չէ հասկանում:
Ի՞նչ է եկեղեցու նպատակը՝ հասկացնել
ժողովրդին իր բարոյական մտքերը, թէ չը
հասկացնել: Եթէ նրա նպատակն է հաս-
կացնել ժողովրդին թէ քարոզի միտքը,
թէ Գրիստօսի խօսքերը, թէ արարողու-
թիւնների, Տէսերի ու աղօթքների իմաստը,
—այն ժամանակ այդ բոլորը պէտք է առ-
վել, կատարվի, և կարգադրի ժողովրդին
հասկանալի, կենդանի մայրենի լեզուով,
այն ժամանակ եկեղեցական ամեն մի արարու-
թութիւն պէտք է կատարվի աշխարհաբաւ
լեզուով:

Իսկ եթէ եկեղեցու նպատակը այդ չէ,
այլ նրա նպատակն է միշտ անհասկանալի
մնալ, և անմիջապէս ոչինչ բարոյական ներ-
գործութիւն չունենալ ժողովրդի վրա, այլ
ամեն բան կատարել, ասել, քարոզել, կար-
դալ միայն ձեռ կատարած լինելու համար,
—այն ժամանակ մենք ոչինչ ստեղծ չու-
նենք:

ՆԱՄԱԿ ԵՈՒՇՈՒՑ

Մարտի 28-ին

«Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է,
որ այստեղի հոգեւոր դպրոցը ունի ահագին հա-
րուստ կալուածներ, որոնց եկամուտով, ըստ
մեծի մասին, ապահոված է նրա դպրութիւնը:
Աշխատող ձեռքերի տակ այդ կալուածները կա-
րող էին ապագայում այնպիսի եկամուտներ
տալ, որոնց անսպասելի և մշտնջենաւոր միջոց-
ներով կարելի էր ամբողջ Արցախի թեմը ծաղ-
կեցնել զպրօցներով: Սակայն քիչ էր լուսն
Անցեալ օր վիճակաւոր առաջնորդի փոխարեը
արդէն յայտնել է զպրօցի հոգաբարձութեանը,
որ այդ բոլոր կալուածները էջմիածնի օնիօղի
կարգադրութեամբ պիտի անցնեն էջմիածնի
ձեռքը, և այդ կալուածները կալուածները իրա-
քանիւր տարի կօնստատօրան պիտի հասցնէ
Սինօղին, զրկելով Հուշու հոգեւոր դպրոցը մի
այնպիսի դրամապիւսից, որով միայն կարելի էր
նրան պահել նիւթական ապահովութեան մէջ:

Ի նկատի առնելով այն հանգամանքը, թէ
ինչ նշանակութիւն ունեն այդ կալուածները
Հուշու հոգեւոր դպրոցի և ամբողջ թեմի ազգա-
յին լուսաւորութեան համար, մի դպրոցի, որից
կախում ունեն համարեա այդ վիճակում գտնա-
վող և միւս բոլոր ազգային հոգեւոր դպրոցները,
մենք դեռ ես սպասում էինք, որ նոր յաջորդը
կաշխատի այդ կալուածների բարեօքմանը և բա-
րեկարգութեանը, որով միջոց կը տայ ուսում-
նարանի նիւթական դրութիւնը ապահովելու և
ժողովրդի պահանջներին համապատասխանելու,
սակայն հակառակ մեր յոյսերի, առանց այն էլ
յափշտակված զանազան անձինքներից ահազին
կալուածների միացորդը անցնում է այժմ էջմիած-
նի անյապ ձեռքը, որով ամբողջ թեմը զրկվում
է լուսաւորութեան միակ դրամապիւսից:

Ինչպէս երևում է էջմիածինը այժմ իր ուշադրութիւնը դարձրել է դպրոցապետական հոգեւորի և կառավարչական վրա, ինչպէս օրինակ և Մոսկովայի եկեղեցական կառավարները:

Ինչ կանխ ասել մասին ներկայ հոգաբարձուները, միթէ չեն բողոքի, չեն դիմի դատաստանին:

Էջմիածինի ձեռքը անցնելուց յետոյ այդ կառավարները մի կողմէ և յետոյ չէ մեր դպրոցների համար: Միթէ Շուշու հասարակութիւնը այնքան անտարբեր կը գտնուի, որ թոյլ կը տայ իր գաւազները դատարարական միակ աղբիւրը անցնի Մանկունիների անկաղ դրամները:

Միթէ մի բաղաւոր օր չի գոյ երբ աղբ կաղաւթի այդ շահամոլներից, որոնք աղբաւորութեան դիմակով յափշտակում են ազգի փողերը: Երբ թէ բոլոր միջոցները մի տեղ կենտրոնացնելու համար, բայց իսկապէս բոլոր աղբային դրամները ուղարկում են Կ. Պօլս կամ ուրիշ տեղ իրանց քաղցած ազգականներին: Իսկ ժողովուրդը համբերում է այդ ամենը, անզգայոր կրկնելով. «ազգութեան միակ նեցուկը եկեղեցին է»:

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՅ

Մարտի 28-ին

Յայտնի է որ Լազարեան ձեռնարանը միակ հայոց ուսումնարանն է ամբողջ Ռուսաստանում, որ իրաւունք ունենալով ուսուցանել մայրենի լեզուն, ունի մի և նոյն ժամանակ կրօնական դիմնադրանքի հետ հաւասար իրաւունքներ: Ուսումնարանի տեսչութիւնից և հայերէն լեզուի դաստաւից, ուրեմն, կախված է այս կամ այն ընթացք տալ մայրենի լեզուի դաստաւութեանը: Բայց չը նայելով այդ ընդարձակ իրաւունքին, աւարտող հայ աշակերտներից շատ քիչերը ինչպէս հարկն է ծանօթ են ազգային լեզուի և պատմութեան հետ:

Այս երևոյթի պատճառը, իմ կարծիքով, հայոց լեզուի և դաստաւութեան եղանակն է:

Շատերը ձեռնարան մտնող մանուկներից բոլորովին հայերէն չը գիտեն, իսկ շատ թէ քիչ իմացողները՝ կողկասեցիներն են, և նրանք էլ խօսում են այլ և այլ բարբառներով, այնպէս որ կարելի է ասել թէ վերջիններն էլ չը գիտեն գրական հայերէնը:

Բայց փոխանակ նրանց աշխարհաբառ դրական լեզուն սովորեցնելու, որ որպէս կենդանի լեզու աւելի հեղու է՝ ուսումնասիրել, սովորեցնում են աշակերտներին գրաբառը: Փոխանակ մանուկների ձեռքը տալ աշխարհաբառ լեզունով ընթերցարան, օրինակ Տէր-Ղևոնդեանի «Մայրենի լեզուն», նրանց պարսպեցնում են պ. Է. մինի «Բնութի հասկացումը» գրաբառ լեզունով գրված գրքով:

Հետևանքով աշակերտներին հարկադրում են չոր ու ցամաք քերականական ձևեր սովորելու և թուրքական պէս, առանց հասկանալու, գրաբառ կարդալու: Ցանկալի է որ գտնէ մի կանոնադրված և դիրքորոշուելով ոճով գրված քերականութիւն էլ լինել, բայց այդ էլ չը կայ:

Այդ դժուարութիւնների պատճառով աշակերտների մէջ առաջանում է զղուանք դէպի մայրենի լեզուն, որի անկանոն և որոշ ուղղութիւնից դուրս դաստաւութիւնը շարունակվում է բոլոր դաստաւներում առաջինից սկսած մինչև ութերորդը: Իսկ ազգային պատմութեան ուսումը բոլորովին չը կայ:

Իմ կարծիքով ժամանակ է արդէն որ ձեռնարանի տեսուչը և ուսուցիչները զգան մեր նոր գրական լեզուն կարեւորութիւնը և գտնէ ստորին դաստաւներում մտցնեն նրա դաստաւութիւնը, իսկ գրաբառը կարող են թողնել բարձր դաստաւներին, որովհետեւ երբ աշակերտները փոքր դաստաւներում օրինաւոր կերպով կը սովորեն իրանց կենդանի մայրենի լեզուն, այն ժամանակ հասնելով բարձր դաստաւներին, նրանք մտաւորապէս բաւական դարգացած կը լինեն հին կրթական հայոց լեզուի ձևերն ու ոճերը ուսումնասիրելու և ըմբռնելու:

Աշակերտներից հայերէն լաւ իմացողները միայն նրանք են, որոնք չեն բաւականանում դաստաւներում սովորածով, այլ միշտ հետաքրքր-

վում են մեր արդի մամուլով և հետեւում են մեր գրական լեզուի առաջադիմութեանը: Մարդը աւանդաբար հարցնում է. քիչ միայն Լազարեան ձեռնարանը չէ ընդունում աշխարհաբառը, երբ արդէն միւս բոլոր ազգային ուսումնարաններում դա ընդունված է: Ժամանակ է, վերջապէս, հասկանալ, որ գրաբառին, որպէս ազգային լեզուին յարկիւն են առաջին կարող: Նա կը մնայ միշտ հին հայերի, կրօնական լեզու, իսկ ժամանակակից հայերի կենդանի, ազգային, մայրենի լեզուն աշխարհաբառն է:

Ս.

ՆԱՄԱԿ ԱՅՄԱՆԱՅԻՅ

Մարտի 30-ին

Մենք վաղուց արդէն համոզվել ենք, որ «Մշակի» գլխաւոր փափագն է պաշտպանել աւան մի տարր, որի երակներում հստակ է հայի արեւը, առանց կրօնի տարբերութեան վրա նայելու: Ձեր լրագրի շնորհիւ մենք հայ-կաթօլիկները գրիչը ձեռք արինք և սկսեցինք նկարագրել մեր կենսիկ հասարակական երևոյթները, որոնց «Մշակի» ծնվելուց առաջ անտես էին առնում: Կուր հասկացողը մեզ հայերի կրօնի և ազգութեան դասազանութիւնը, իսկ ձեր լրագրից առաջ հայ-կաթօլիկները ոչ թէ չէին մասնակցում ազգային գործերում, այլ և ազգային մամուլն անգամ մեղք էր համարում իր էջերում ազգային մի կաթօլիկի գրած յօդուածը կամ նամակը: «Մշակի» այդ արած ծառայութիւնը ազգին կը յիշվի մանաւանդ ապագայում, երբ նրա դէմ կը դրուի շարժիչ և անկողմնապահ դատելի դեռ ևս անկարող ժամանակակիցները կանցնեն և տեղ կը տան մի այլ սերունդին: Շատ ժամանակից յետոյ կը յիշեն, որ «Մշակին» առաջինի է եղել, որ մեր մէջ կրօնի համակերպութեան և կրօնի ազատութեան դրօշակ է բարձրացրել, յայտնելով որ կրօնի մէջ չէ ազգութիւնը, այլ ազգութիւնը պահպանվում է մայրենի լեզունով, կը յիշեն որովհետեւ այն պաղաճաբար որի համար այժմ ձեր թերթը հայոյնքը և յանդիմանութիւն է ուսանում, ժամանակով յաղթող կը հանդիսանայ և մեր յաջորդները կը վաշտեն ոչ և միայն իրեն առանց բռնադատելու համոզմունքն ու կրօնը:

Ես այդ բոլորը դրա համար եմ ասում, որ թէ և «Մշակը» շատ սիրով է կարդում Ախալցե-խայի թէ ընդ և թէ գաղթական հայ-կաթօլիկ հասարակութիւնը, տեսնելով որ նա մեր պարբերական հրատարակութիւնների մէջ միակ հայոց ազգային թերթ է, որ պաշտպանում է ազգի շահերը անխնայ, արհամարհելով այս և այն եսամոլ և անհնական շահ ունեցող անհասարակութեանը, բայց այնու ամենայնիւ կան և մեզ մօտ դեռ ևս խառնաբախներ և մոլեռանգներ որոնք աշխատում են ամեն միջոցներով «Մշակի» պատիւը վայր գցել պարզապէս և ազգէտ ժողովրդի աչքում:

Կրանց թուում է և մեր եկեղեցու նախկին գործակալ հայր Յակոբ Չիշեանց:

Նա աշխատում է հայր Շահինեանցի տեղը բռնել ամեն տեսակ խտրականութիւն, ստորագրել է տալիս ժողովրդին մի խնդրք որ ուղարկի Սարատովի կաթօլիկ եպիսկոպոսին, որպէս զի կրկին նշանակվի քահանայ Ախալցեայի հայ-կաթօլիկների մէջ, չը նայելով որ ժողովուրդը շատ լաւ է յիշում նրա վատ անցեալը: Մի և նոյն ժամանակ նա համոզում է ժողովուրդը որ նրանք հայ չեն, այլ վրացիներ են և ամեն ջանք պիտի գործ դնեն վրաց լեզուն կրկին մտցնելու հայ-կաթօլիկ եկեղեցու արարողութիւնների մէջ: Խեղճ ժողովուրդ... Նա խաբւում է այդ տեսակ մոլեռանգներից և ազգի թշնամիներից...

Հայր Շահինեանց կարողացաւ հասկացնել հայ-կաթօլիկ ժողովրդին որ կրօնը և ազգութիւնը տարբեր բաներ են, որ ժողովուրդը կարող է ամենահաւատարմ կերպով պաշտել կաթօլիկ հաւատը, բայց այնու ամենայնիւ հայ լինելով չը պէտք է ուրանայ իր ազգութիւնը և պէտք է ծառայի իր ազգին: Այժմ եթէ հայր Չիշեանցին կաջողվի նրա տեղը բռնել, կրկին հայ-կաթօլիկները նրա կորստաբեր ազգեցութեան տակ կը սկսեն թշնամական կերպով վերաբերվել դէպի իրանց ազգային լեզուն: Ես իմ ամեն կաթօլիկ ենք, ուրեմն հայ չենք, այլ վրացի ենք»:

Ողորմելի, կուրացած ժողովուրդ, որ գառնա-

զգեստ գաղթի, քահանաների և վարդապետների ձեռքում խաղալիք ևս դառնում և նրանց շնորհով ազգային ան ձն ա ս պ ա ն ու թ իւ ռ ն ես գործում...

Հայոց կաթօլիկ դպրոցն էլ որ Շահինեանց հօր ձեռքում ստացաւ արդէն ազգային գոյն, այժմ կրկին պէտք է ազգին թշնամական ուղղութիւն տաւայ նոր ֆանատիկոսի ձեռքն ընկնելով: Միթէ ժողովուրդը այդ բոլորը կը համբերի:

Մի քանի խօսք էլ ուղղում եմ մեր լուսաւորական եղբայրներին:

Մարտի 27-ին հայոց կաթօլիկ եկեղեցում «Հանապարհ խաչի» օտնի պատճառով մեծ եկեղեցական հանդէս կար: Եկեղեցին լի էր և հայ լուսաւորական եղբայրների բազմութեամբ: Մենք կաթօլիկներս շատ ուրախ ենք երբ մեր եկեղեցին այցելում են մեր լուսաւորական եղբայրները: Բայց թող ներել լինի ինձ նկատել լուսաւորական եղբայրներին որ նրանցից ոմանք իրանց անվայել կերպով են պահում եկեղեցում. ծաղրում և հայոյնում են կաթօլիկ հայոց եկեղեցական ծէսերն ու արարողութիւնները: Կա լաւ չէ: Այդ ձևով կարելի է վերաւորել ժողովրդի անհասարակութիւնը և յետ մղել կաթօլիկ հայերին ազգային զգացմունքից:

Այո, մինչև այժմ երկու կողմին էլ մենք յանցանք էինք գործում ընդդէմ ազգութեան գաղափարի և մի և նոյն ժամանակ դարմանում ենք թէ ազգը երկպառակցած է:

Ժամանակ է վերջ դնել կրօնական թշնամութիւններին: Կրօնները կարող են տարբեր լինել, բայց ազգը մի է: Սովորներ, վերջապէս, ջոկել ընդհանուրը մանաւորից, ազգութիւնը կրօնից:

Հայ-կաթօլիկ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մօսկվա քաղաքը շատ հանգիստ կերպով կատարել է երեւի ուսու երաժիշտ Նիկոլայ Ռուբինյանի թաղման հանդէսը: Մօսկվայիցիները ուղեցին մրցել Ս. Պետերբուրգի բնակիչների հետ, որոնք նոյնքան հանդիսաւոր կերպով թաղեցին Գոստոնիսկուն:

Ձեռքաթաղից մեզ գրում են, որ պ. Պետրոս Մամիկոնեանց, որ իրան արքունական գանձաւանի հաշապահ է հրատարակել «Մեղուի» № 38 մէջ տպված մի նամակում, ամենին հաշապահ չէ, այլ հասարակ գրագիր է այդ գանձաւանի մէջ: Մեր թղթակիցը աւելացնում է. «Երբեք պարտք չաւ է ցանկանում հաշապահի պաշտօնը ստանալ»:

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Մեր քաղաքային բուլվարը մեծացրին և լայնացրին: Տեղիս դէպուստի կարգադրութեամբ մշակներին ձրի են բանեցնում այդ աշխատութիւնների վրա: Կա մեր կարծիքով մի տարաբնույթ անդհոթիւն է»:

ԿԻԵՎԻՅ մեզ գրում են. «Այս 13 տարի է, մինչև անցել 1880 թվի մարտ ամիսը այստեղ բնակվող հայերի գաւազները միտում էին ուսու քահանայի ձեռքով, որովհետեւ հայերը չունէին իրանց քահանայ: Այժմ Կիւնեվից մի հայ քահանայ ուղարկվում է մեզ մօտ ժամանակ առ ժամանակ»:

Այս օրերս հրատարակվեցաւ Ս. Պետերբուրգում առանձին բրոշուրայով Գերաթիմովի գրութեան մասին «Объ организации подвижных школ въ Россіи»: Այդ առարկան բոլորովին նոր լինելով Ռուսաստանում, Գերաթիմովի գիրքը ուսու հայաբաղկութեան ուղղութիւնը անշուշտ կը գրաւի:

«Неделя» շաբաթագիրը պատմում է որ ուսու հոգեւորականութիւնը կարգադրութիւն է արել, որ ուղղափառ եկեղեցու քահանայ դառնալ ցանկացողը չորս ամսվայ ընթացքում իր նշանակվելու օրից պէտք է պրակվի և ներկայանայ հոգեւոր իշխանութեանը ձեռնադրվելու համար: Ուրեմն, ասում է «Неделя» շաբաթագիրը, չորս ամսվայ ընթացքում մարդ պէտք է ուղի չուղի հարմանցու գանի իր համար: Այդ տեսակ աւանդութիւնները, ուսու լրագրի կարծիքով, ի հարկէ բաղաւոր չեն կարող լինել և աւելի լաւ է

համարում ազատ իրաւունք տալ քահանային պրակվել թէ չը պրակվել, կամ պրակվել երբ կամենում է:

«ПОРЯДОКЪ» լրագրին փոփոխի քաղաքից դուրս են որ նորերում քաղաքի նահանգական դատարանում քննում էին մի մարդուն, որ մեղադրվում էր գողութեան մէջ: Նրա որ դատարանը կարգում էր իր կայացրած վճիռը, որով մեղադրվածը դատապարտվում էր հինգ տարվայ տաժանակիր աշխատանքների, այդ վերջինը վերցրեց վիաների սեղանի վրա գրված կազմված աւանտարանը և շրպտեց գիրքը նախագահի երեսին, կանչելով. «հայ հեղ ձեր արդար դատաստանը»: Գիրքը դիպաւ դատաւորներին, յետոյ դէրցաւ օրի (օրինասին), կտրելով նրա ապակին և նրա արծիւը: Գատաւորները հեռացան դարձից, առանց վրձնի ընթերցանութիւնը վերջացնելու և այդ ժամանակ յանցաւորը դարձաւ վերցրեց՝ ջրով լի շիշը, որ գրված էր սեղանի վրա և ուղղում էր այդ շիշն էլ գցել դուռն գնացող դատաւորների ետեւից: Վերջապէս դատաւորական արխամով յանցաւորի վրա ընկաւ, բռնեց նրան և ուղղում էր դուռն տանել դարձից, բայց սա կատաղի կռիւ սկսեց պրիստովի հետ և երկար ժամանակ նրանք միմեանց հետ մարտնչում էին, մինչև որ կանչված պօլիցիան վրա հասաւ դատարանը և տարաւ յանցաւորին բանտը:

«ПОРЯДОКЪ» լրագիրը հաղորդում է որ Սամարայի գեմետովի ժողովի ժամանակ առաջարկվեցաւ ուղերձ ուղարկել թաղաւոր Կայսրին: Պատգամաւորներից ոմանք, և նրանց թուում և ծերունի Նուրաթով պատգամաւորը յայտնեցին որ ուղերձ ուղարկելու համար «անյարմար» ժամանակ է: Եթէ ուղերձի մէջ չէ կարելի յիշել այն ինչ որ կայ մեր սրտերում, աւելացրին նրանք, ուղերձի ուղարկելը «մի աւելորդ ձև է»: Երբ որ ժողովուրդը ծանաբաւեցնված է հարկերով մենք չենք խնդրում որ հարկերը պակսանցվեն, երբ որ կապիտալը հարստանաւորում է աշխատանքը, երբ անհատական իրաւունքը դեռ ապահովված չէ, մենք նրա մասին չենք խօսում, ուրեմն քիչ կատրող ենք ասել այժմ, ասում էին պատգամաւորները: Նախագահը ստիպված էր շատ անգամ խօսողներից խօսքի իրաւունքը խլել և վերջը առաջարկեց քուէարկել ուղերձի ուղարկելու հարցը: Միայն նախագահ Լուրսաով և երկու ուրիշ պատգամաւորներ ձայն տուցին յօդուս ուղերձի ուղարկելուն, իսկ մնացած ժողովը մերժեց ուղերձի ուղարկելու միտքը:

Խաղիվի համալսարանի պրօֆեսոր Լազարեվիչ առաջարկեց համալսարանական բժշկարանի օրգանիստորի պաշտօնը մի կիւն-բժշկին, տիկին Իվանիցիուին: Համալսարանի խորհուրդը ընդունեց Լազարեվիչի առաջարկութիւնը բազմութեամբ 38 ձայնի 4 ձայնի դէմ: Լավում է որ և բժշկական տիկին Լազարեվիչ-Իվանիցիուին խնդրել է տուել համալսարանի խորհրդին որ պատօջղական անատոմիայի ամբիոնը համալսարանում իրան յանձնվի:

«Минута» լրագիրը ասում է որ փապաւորապան կին Սօֆիա Պերովսկայա կոմս Պերովսկու թոււ է, որ Նիկողայոս կայսրի ժամանակ ներքին գործերի մինիստր էր, իսկ կոմս Պերովսկու որդին, Սօֆիա Պերովսկայի հայրը Ս. Պետերբուրգի նահանգապետ է եղած:

«Голосъ» լրագիրը ողջունում է բարօն Նիկոլայի ազգային լուսաւորութեան միջնորդի պաշտօնի վրա նշանակելը, ասելով որ նա անպատճառ կը հետևի ազատամիտ ուղղութեանը, որովհետեւ մի ժամանակ Գօլովինի միջնորդի օրդական էր, որ յայտնի էր իր ազատամիտ ուղղութեամբ: «Минута» լրագիրը նոյնպէս մեծ ուրախութեամբ ողջունում է բարօն Նիկոլայի նշանակվելը, ասելով. «Մենք չենք ծածկում, որ մենք միշտ յարգող էինք կոմս Տօլստօի ուղղութեան և այդ պատճառով ողջունում ենք բարօն Նիկոլայի նշանակվելը, հաւատացած լինելով որ նա կը հետևի ուսումնարանական գործի մէջ կոմս Տօլստօի ուղղութեանը: Վերջապէս «Новае Время» լրագիրը ասում է. «Կուրի տարածված է այն լրագիրների ուրախութիւնը, որոնք բարօն Նիկոլայի մէջ ուղղում են տեսնել Գօլովինի միջնորդի ազատամիտ ուղղութեան հետև-

Երբ խմբագիրը—հրատարակող գրիչները ԱՐԾԲՈՒՆ

Յ Ե Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է «Կենտրոնական» և պ. Զ. Գրիգորեանցի «Կովկասեան» զրաւաճառանոցներում «Մուսոր, Ֆրիդկալան և բարոյական ինքնակրթութեան մասին» հեղ. Զոն Ստիւարտ Բէլկի. թարգմ. Գրիգոր Շահբաղդեանի. գինն է 60 կոպէկ: Օտարաբաղաճացիք կարող են ուղղակի թարգմանչին դիմել այս հասցեով: ВЪ Тифлисъ, Учителю Армянской Духовной Семинаріи Персепянь, Григорію Шахъ-Будагянц.

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ է թարգմանչի հետեւեալ աշխատութիւնը. «Մայրական Դաստիարակութիւնը, բնութեան օրինաց վերայ հիմնուած». հեղ. Ժ. Բամբուսսին:

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍ-ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց բնական գոգնը վերադարձնող: Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏԱՅՈՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խառնութի մէջ:



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԻԿՂ, մազերը ամրացնող համար, 1 ր. ամանը փրձին զիւս-ցաւի գէմ, ՏՈՒՍԼԷՏԻ ՍԱՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն: 48—100

Ձր նոյնով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջիկայ գներով կը ծախվին. ԿՕՆԳՕ-ԹԵՅ 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ ՄՕՆԻՆԳ 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիւսնայի ԿԱՅՍԱՌԻ 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և ԱՄԵՆԱԼԱԻ ԹԵՅ 2 ր. տոնաց թղթի: Անգլիական բէլձիկներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200 ր. Անգլիական խառնութի մէջ: Գործարարութիւն ԲԱՐՆԱԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ, Ջոնսոնի ԿՈՂՊԵՔՆԵՐԸ, Տոբինի ԳՐԻԶՆԵՐԸ և Էլիսաբեթ կալուստ շօխալի ծախելու համար, որոնք վարկի հանգիսի ժամանակ ոսկի մեղալ ստացան: ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.: Սաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել: Անգլիական խառնութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ր., կոնֆեկտներ հազի գէմ 60 կ. ֆունտը: 56—100

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ ցանկանում է ունենալ ՊՐԻԿԱՇԶԻԿԻ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹԵԱՆ պաշտոն և գիտէ՞ աւելանալ ԼԵԶՈՒՆԵՐ: Հասցէն թողնել «ՄՇԱԿ» խմբագրատանը: 3—4 (5)

ՄԱՍՏՈՒԼԻ տակից դուրս եկաւ և շուտով կը տարածվի «ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ» գրքը: 96 երեսից բաղկացած և ուղղաճ երեւելանոս: Կը ծախվի առաւելագոյն թիֆլիսի մէջ «Կենտրոնական զրաւաճառանոցում»: 6—7.

ՎԱՃԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ կը ծախվին, վարտիքներ 4 ր., ամբողջ հազուստ 14 ր. և աւելի, տրիկո և պարուսի նա 75 կ. արշիւն: Նոր ձևի հրացաններ 45 ր. 60 ր. և 100 ր., բէլձիկներ 4—40 ր., զիւսակներ 1 ր., թամբեր 30 ր. և աւելի, կոնետի առաջին տեսակի 2 ր. շիշը, հին պօրտփէյն և խրեւ 1 ր. 40 կ., շամ պոյն գինի 3 ր., կոնֆեկտներ 35 կ. ֆունտը և թէյ տոնաց թղթի 1 ր. 60 կ. ֆունտը, ամենալաւը Մօսկվայց 2 ր. 20 կ. թղթով: ՄԻԵԻՆՈՅՆ ՏԵՂԸ ՄԵԾՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ մահճակալներ, մատուցարաններ, կողպէքներ, դանակներ, գդալներ, գրիչներ, թուղթ, կիշօնկա, ձիասանաղ, փրձին, ամաններ, բաժակներ, մուրաբաներ և այլն 30% աւելի էժան, քան թէ ուրիշ խանութներում: 5—15

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է «Կենտրոնական» ու «Կովկասեան» զրաւաճառանոցներում ՄՕԼԻԲԵՐԻ «ՏՂԱՄԱՐԳԱՆՑ ԽՐԱՏ», ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ: Գինն է 30 կ.:

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է թիֆլիսի հայ զրաւաճառաների մօտ Կ. Կոստանեանցի «Գրաբառ»-ը: ԽՈՆԱՐՀՈՒՄԸ մի ազիւստ կի մէջ, գործնական և գիտական կան ուսուցիչ մասի րուս լեզուի համար: Գինը հատով 25 կոպ., գումարով 20 կ.:

Այս գրքից պարունակելով իւր մէջ բայերի մի պարզ նախագիտելիք, յանդերի, օրինակների և խոնարհմանց ամփոփ աղիւսակներ շատ հեշտացնում է աշակերտաց զբաւառ բայերի ուսումը: Ի նկատի ունենալով զործի օգտակարութիւնը և գնի թեթեւութիւնը համարձակ կարելի է խորհուրդ տալ զբաւառ ուսանող աշակերտաց ձեռք բերելու յիշեալ երկաթիւթիւնը:

Նոյն հեղինակի «Հիւսուածք հայ պատմագրաց», 3 հատոր (3 ր.) և «Հայոց հեթանոսական կրօնը (30 կ.) կարելի է նոյնպէս թիֆլիսի զրաւաճառանցից կամ ուղղակի հեղինակիցն ստանալ:

ԵՂ. ՍԱԼԻՕՂԼԻ ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ: Ի նկատի առնելով, որ մի քանի ժամանակից թիֆլիսի ծխախոտի շատ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐԵՐ լաւ առեւտուր չունենալով, իրանց թոյլ են տալիս ԿԵՂԾԵԼ իրանց արգիւնաբերութեան ԳՐՕՇՄՆԵՐԸ, որոնք արտաքուստ նմանութիւն են ունենում մեր դրօշմների հետ և գրադէտներն էլ նրանց դժուար կը զանազանեն, մեր գործարարը հարկաւոր է համարում ԶԳՈՒՇԱՅՆԵԼ գնորդներին և առաջարկել նրանց, որ գնելու ժամանակ ուշադրութիւն դարձնեն մեր ՖԻՐՄԱՅԻ վրա. «ԹԻՐԻՔԱՅ ՀՊԱՏԱԿ ԵՂԲԱՐՔ ՍԱԼԻՕՂԼԻ»:

Գործարան ՍԱԼԻՕՂԼԻ 4—5

Въ Редакціи газеты «МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում են Կենտրոնական Գրաւաճառանոցում:

1. Հայը և Հայաստանը օտարների աչքում. հրապարակական դաստիարակութիւն ընթերցում թիֆլիսի ժողովարանում Արգար Յովհաննէսեանի. թիֆլիս, 1881 թ. գ. 40 կոպ.
2. Նոյն տեղը վաճառվում են:
Միութիւն Հայութեան, Բանախօսութիւն Մաղաքիայ Ծ. Վարդապետի Օրմանեան, արտասանեալ ի յարանիս կրթասիրաց ընկերութեան Յիսակիւտար ի 17-ին նոյեմբերի 1879 թ., Կ. Պօլիս գ. 45 կ.
3. Տեղեկագրութիւնք ի փոքր և ի մեծ Հայո Հ. Ներսէսի Սարգսեան Միութեան վարդապետի, Վ Ենետիկ գ. 1 ր.
4. Ստորագրութիւն հին Հայաստանայց Հ. Ղուկ, վարդ ինձիճեան ի Միութեան Միաբ. ըստ հին և ըստ միջին դարու անուանեալ ժամանակաց ի Վ Ենետիկ գ. 5 ր.
5. Պատմութիւն Արխատիկայ վարդապետի Լատիվերդիցի, Վ Ենետիկ գ. 1 ր. 50 կ.
6. Մեծին Գրիգորի Առաջնոյ Սրբոյ Քահանայապետի կանոն Հովուական, Վ Ենետիկ գ. 1 ր. 50 կ.
7. Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք և աղօթք, Վ Ենետիկ գ. 2 ր.
8. Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ Վ Ենետիկ գ. 2 ր.
9. Տեղեկագրութիւն Հայոց Գաղթականութեան Ուղղեվարութիւն յամի 1876 Սալապ Մ. Արթուրեան Ֆօքշան գ. 1 ր. 20 կ.
10. Սրբ. Կանոնի Գերթումն ի Մահ Սուրբի, թարգմանեալ Տեառն Հ. Մանուկի Վ. Զաւախեան ի Միութեան միաբանութիւնէ, Վ Ենետիկ գ. 1 ր. 75 կ.
11. Առաք Միութեայ Գօշի, Վ Ենետիկ գ. 1 ր.:
Նոյն տեղը ստացուել են մեծ քանակութեամբ Զատիկի ամսերին նուիրելու զանազան հասակի մանկանց ընթերցանութեան համար փառակազմ գրքեր, Ֆրեբելեան խաղեր, նկատողական ուսման պատկերներ և այլն:
Օտարաբաղաճացիք ճանապարհի ծախք են վճարում 10% առանց փողի պատուէրները չեն կատարվում:

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ			
Համեմատեցէք թէյի ֆունտը	1 ր.	5 կ.	Մ
—	1 ր.	10 կ.	—
—	1 ր.	20 կ.	—
—	1 ր.	40 կ.	—
—	1 ր.	60 կ.	—
—	1 ր.	80 կ.	—
Ամենալաւը	2 ր.	—	—

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ԿՈՎ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅ. Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐԻՔԵՐ

1. Ա. Մ. Ե. Պ. — Դիւցազունք ըստ Խորենացւոյը Հայի, Արամ, Վահագն. պատկերներ պատմական կեանքից: Տիֆլ. 81 թ. գինն է 30 կ.:
2. Կոստանեանց. Կ.—Գրաբառ բայերի խոնարհումը մի աղիւսակի մէջ. գործնական և գիտական ուսումնասիրութեան համար. գինն է 25 կ.:
3. Երզնկեանց. Եղ. Քէչոյ. — Խմբական ձայնագրեալ ազգային երգեր (սակաւաթիւ) 50 կ.:
4. Մ. Բ. Բ. — փոքրիկ ձեռնարկ

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետեւ այդ մահագլխիւնը ստանում է թէյ ուղղակի պլանտատիւններից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականաչափ է փոքր շահով: Աւարտել կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կախօ և շօխալ-ֆրայ, մուրաբա և կոնֆեկտներ 25% աւելի էժան, քան թէ

գործնական տնտեսութեան. թարգմանեց զանազան փոփոխութիւններով Ս. Պալաստեանց 50 կ.:

5. Մօսկվայց Խորենացւոյ պատմութիւն Հայոց 80 կ.:
6. Զոն Ստ. Բէլկի—մուսոր, Ֆրիդեալան և բարոյական ինքնակրթութիւն 60 կ.:

Մամուլի տակից են հրատարակութեամբ Զ. Գրիգորեանցի

1. Ծերերից— Թեոդորոս Ուշուշի
2. — Թորոս Լեւոնի (2-րդ տը պաղրութիւն)
3. Գամառ-Քաթիկայի—մանկական երգեր և ոտանաւորներ:

8—12

ամեն տեղ, անկողնիներ, հրացաններ, բէր վոլֆերներ, կողպէքներ, մատուցարաններ, ամաններ, դանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թամբեր, զուլպանեկանաց և տղամարդկանց, թաշկինակներ, մակիւնտոններ, կալիկիօր, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ, ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ: Արծրունու զալլէրէում: 100—80